


Ցցի Նախագահ, Տես քեզ աշխատանքի մեջ

Նյութ՝ Փրկության Աշխատանքը Արագացնելու համար



Որպես ցցի նախագահ դուք կրում եք ձեր ցցում փրկության աշխատանքի սուրբ քահանայության բանալիները: Աշխատելով միսիայի նախագահի և ձեր ցցի եպիսկոպոսների հետ միասնության մեջ, դուք կարող եք գործածել այդ բանալիները և միավորել ձեր ցիցը փրկության աշխատանքի մեջ:

Տեսանյութ



Օգտագործել
Քահանայության
բանալիները

Հոդվածներ

Երեց Ռասսել Մ. Նելսոն, «Բաց մի թողեք
ալիքի վրա լինելու հնարավորությունը»,
2013 ապրիլյան գերագույն համաժողով

Երեց Նիլ L. Անդերսեն, «Սա հրաշք է»,
2013 ապրիլյան գերագույն համաժողով

Ի՞ՆՉՆ Է ՆՈՐ ԻՆՉ ՀԱՄԱՐ:

Հավանաբար, ձեր ցցում կլինեն թվով ավելի շատ միսիոներներ, քան երբևէ նախկինում: Այդ աճը տալիս է ձեզ ավելի մեծ հնարավորություն.

- **Լինելու օրինակ**, գտնելով և պատրաստելով անհատներին և ընտանիքներին միսիոներների կողմից ուսուցանվելու համար:
- **Համակարգելու միսիայի նախագահի հետ, հասկանալու դերերը և գործածելու քահանայության բանալիները միասնության մեջ:** Միսիայի նախագահը կրում է միսիոներների և դարձի բանալիները, իսկ դուք կրում եք ձեր ցցում միսիոներական աշխատանքի բանալիները: Միասին աշխատելով, դուք կարող եք իրականացնել փրկության աշխատանքը: Դուք պետք է **կանոնավոր հանդիպեք** միսիայի նախագահի և համակարգող խորհուրդների հետ՝ ջանքերը միավորելու համար:
- Հաճախ **ուսուցանելու** Քրիստոսի վարդապետությունը և փրկության ծրագիրը և միսիոներական աշխատանքի սկզբունքները և խրախուսելու անդամների մասնակցությունը:
- **Աջակցելու յուրաքանչյուր ծխի՝** փրկության աշխատանքը կատարելիս: Հերթական հարցազրույցների ժամանակ խնդրեք յուրաքանչյուր եպիսկոպոսի կիսվել յուրաքանչյուր հետաքրքրվողի և նոր կամ վերադարձող անդամի առաջընթացով:

ՈՐՏԵ՞Ղ ԵՍ ԿԱՐՈՂ ԵՍ ՍՈՎՈՐԵԼ ԻՍ ԴԵՐԸ:

Ձեր դերը չի կայանում աշխատանքը միայնակ անելու մեջ, այլ՝ առաջնորդելու ցիցը փրկության աշխատանքը կատարելիս: Լրացուցիչ տեղեկության համար տես.

- *Ձեռնարկ 2, Գլուխ 5*
- *Քարոզիչ Իմ Ավետարանը, Գլուխ 13*
- Հատուկ հեռարձակում. Փրկության աշխատանքը





Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ:

- Ձեր **Տարածքային Յոթանասունականը** կարող է օգնել միսիաների նախագահներին և ցցերի նախագահներին հանդիպել համակարգող խորհուրդներում:
- **Միսիայի նախագահը** կօգնի ձեզ իմանալ, ինչպես լավագույնս աշխատել լիաժամկետ միսիոներների հետ: Բացի դա, դուք, հավանաբար, կանոնավոր կհանդիպեք համակարգող խորհուրդների ժողովներին:
- Ձեր **խորհրդականները** կարող են օգնել ձեզ առաջնահերթություն տալ այս աշխատանքին, ուսուցանելով վարդապետությունը և ավետարանով ուրախությամբ ապրելու օրինակ ծառայելով:
- Միսիոներական աշխատանքին կցված ձեր **քահանայապետը** պետք է ուսուցանի և աջակցի ձխի միսիաների ղեկավարներին ամբողջ ցցում, այդ թվում՝ ձխի միսիայի ծրագիրը կազմելիս:
- Ձեր **եպիսկոպոսները** պետք է ձեզ տեղեկացված պահեն իրենց ծխերում փրկության աշխատանքը միավորելու իրենց ջանքերի մասին:
- **Լիաժամկետ միսիոներները** կարող են ուսուցանել և ամրացնել նրանց, ում անդամները կգտնեն:
- Ձեր **ցցի անդամները**, այդ թվում՝ երիտասարդները և երեխաները, ունեն ոչ-անդամ կամ քիչ ակտիվ ընկերներ, հարևաններ և ընտանիքի անդամներ: Նրանք կարող են մեծ օգնություն լինել՝ մարդկանց գտնելու և հրավիրելու գործում, որ զան և տեսնեն, թե ինչ է առաջարկում Հիսուս Քրիստոսի ավետարանը:

ՈՒՆԵՆԱԼ ՄՏԱՊԱՏԿԵՐ

«Ես խնդրում եմ, որպեսզի յուրաքանչյուր ցցի և շրջանի նախագահ ընդունի լիակատար պատասխանատվություն և հաշվետվողականություն՝ ցցում կամ շրջանում հետաքրքրվողներ գտնելու և նրանց հետ ընկերակցելու հարցում: . . . Դուք՝ եղբայրներ, սուրբ պարտականություն ունեք Տիրոջ առաջ այդ աշխատանքի համար: Դուք օրինակ եք ծառայում նրանց համար, ովքեր գտնվում են ձեր ոգեշնչող առաջնորդության ներքո»:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլի

«Ցցերի նախագահները . . . կրում են իրենց միախորհրդանուն միսիոներական աշխատանքի պատասխանատվության բանալիները, և նրանք ոգեշնչում են անդամների մասնակցությունը»:

Երեց Ռասսել Մ. Նելսոն

«Ցցերի նախագահները . . . պարտականություն և պատասխանատվություն ունեն օգնելու անդամներին գտնել արտոլ մաքուրներին և պատրաստել նրանց մկրտության և կյանքի ծառայության համար իրենց ծխերում և ցցերում»:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁՆԻ ՕՐԵՐԻ ՄՐԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ